Հրանտ Մաթևոսյան

Մուշեղ Գալշոյան

Մուշեղ Գալշոյանը մեր հասարակական, քաղաքական, գեղարվեստի հրապարակում սպասված, սպասվող մարդ էր, նա նա էր՝ ում մենք սպասում էինք, և նրա անժամանակ կորուստը իսկապես կորուստ էր մեր ազգային ու ողջ համախորհրդային հրապարակից:
Գեղանի, սկզբունքային, խելացի, վերապլացի մեջ ընդհատված Ակսելի անհրաժեշտությունը մեր օրերում, քարոտ, ցամաք, դաժան երկիրը, որ այնքան քար է տալիս, որ բրգելու, հացին շունչ տալու համար բրգի մեջ պահելու վրա իր կես տարածքն է տալիս և ուր անասունը արդեն հունիսին արմատ է կրծում, քայքայվող, լքվող գյուղը՝ որ մեծ փլուզում էր նշում և որը վերահաս Արցախյան կատաստրոֆ դարձավ, պատմությունը, որ մեր աղարտող ոսպնյակի ետև ձևախեղում էր երեկվա դեմքերն ու դեպքերը և մեր այսօրվա իրականության մեջ ձևախեղված վերաբերմունքի ժառանգորդի կանգնեցում, դիմազրկվող, ապազգային, անբարո, երկրի ապաքաղաքացի քաղաքացին, որ իր գյուղերն ու քաղաքները քանդվելու համար էր շինում և որ ոտքը փախուստի էր պահած,- սպասում էին իրենց դատախազին և փաստաբանին, իրենց վկային ու պատմաբանին, իրենց լեզվով իրենց մասին մեզ պատմողին:
Նա եկավ և լսվեց ու սիրվեց:
Զորի Միրոն և Մարութա սարի ամպերը, ծաղկած քարեր և Բովտուն, հրապարակումն Ռանչպարների կանչի՝ փառահեղ վերջաբանով և որպես բուն վերջաբան՝ քաղխորհրդի պատգամավորի ելույթ՝ մեղադրանք ու պատգամ:
Թուրքը պիտի լինի, աշխարհում բոլորն էլ ունեն իրենց թուրքը, դու քեզ նայիր:
Երկրաշարժը պիտի լինի - տունդ դու քանդվելու համար մի կառուցիր:
Ազատ ազգեր չկան, քո գերության մեջ դու մի ճորտացիր և քո երկրում քո

կառուցածը թող ստրուկի աշխատանք չլինի, դու քո աշխատանքով տիրակալ եղիր քո տիրոջ վրա:
Նա եկավ մեզ վերածնելու բարոյապես և զենք ու հայրենիք վստահելու բարոյական մեր ներկայությանը միայն:
Նա գնաց և վշտացրեց: Հիրավի սպասված, հիրավի բախտավոր մարդ: